

978



Վ. ՄՈԼՈՏՈՎ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ  
ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

338.98 (47)

Մ-86

ՊՈԽՈՎՐՅԱՅ  
ՅԵՐԵՎԱՆ

1933

R - MAR 2010

Վ. ՄՈԼՈՏՈՎ

338.98(47)

Մ-86

այ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԴԱՄՅԱԿԻ  
ԱՌԱՋԲՆ ՏԱՐՎԱ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

0074  
333  
33

(ԶԵԿՈՒՑՈՒՄ ՀԱՄ-Կ. (Բ)Կ. Կ. Կ.-ի Յել. Կ. Վ. Հ.-ի  
ՄԻԱՅՅԱ, ՊԼԵՆՈՒՄՈՒՄ)

378  
11923

ԿՈՒՍՀՐԱՑ  
ԵԵՐԿՐՈՐԸ - 1938

04.07.2013

32. 293

7500

4859 - 91

Տեխնիկական խմբագիր՝ Մ. Նիքին

Սբրագրի՝ Ա. Տեր-Սկրյան

Հանձնված և պատճենահանության 20 հունվարի 1933 թ.

Ստորագրված և տպագրված 24 հունվարի 1933 թ.

Տիրած 10.000. Հրատ. № 74, 110.000 տպ. Բ2

Պատրաստի տպարան

Գոտովիր № 192 Գլավիթ № 7707 (Բ)

## ՏԵՐԿՐՈՒԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՐԵԶԻՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերներ, ընկ. Ստալինի զիկուցումով սպառվեց առաջին հնդամյակի արդյունքների հարցը, համաշխարհային պատմական նշանակություն ունեցող արդյունքների հարցը, — և ուրվադժվետ այժմ կուսակցության առաջ ծառացած հիմնական խնդիրները։ Իմ խնդիրն ե՝ լուսաբանել այն հարցերը, վորոնք կապված են ժողովրդական տնտեսության 1933 թվականի՝ յերկրորդ հնդամյակի առաջին տարվա՝ պլանի հետ։

Հարկավ, յերկրորդ հնդամյակի առաջին տարվա խնդիրներն ամենասուբրոտ կերպով շաղկաղված են առաջին հնդամյակի արդյունքների հետ։ Յելակետ և հանդիսանում այն փաստը, վոր առաջին հնդամյակը կատարվեց, այն ել կատարվեց չորս տարում։ Յել դեռ ավելին։ Յերկրորդ հնդամյակի առաջին տարվա խնդիրները վորոշելու համար հիմնական նախառդրյալ և հանդիսանում այն փաստը, վոր չնորհիվ յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականության կիրառման՝ սոցիալիզմը վճռական հաղթանակ տարավ առաջին հնդամյակի շրջանում, վոր լնինյան «ովկ-ում» հարցը վերջնականապես լուծվեց մեր յերկրում։ Սակայն դրանից չի կարելի անել այն հետեւությունը, թե դասակարգային թշնամին զենքը վայր և դրել, թե պայքարը դադարել ե, կամ առնվազն մեղմացել ե, թե սոցիալիզմի ճանապարհին ծառացած քոլորդ դժվարություններն արդեն հաղթահարվել են։ Գործն, իհարկե, այդպես չե։ Լուծեկով կապիտալիստական տարրերի գեմ սոցիալիզմի մղած պայքարի հիմնական հարցը մեր յերկրում, մենք դեռ հեռու յենք լուծած լինելուց սոցականարարության դժվարին շատ խնդիրներ։ Սակայն ձենվելով առաջին հնդամյակի քաղաքական արդյունքների և նյութ

Բական նվաճումների վրա, այժմ մենք կարող ենք ավելի հաջողությամբ լուծել Հիշյալ հարցերը: Յեթև մենք— չնայած մեր աշխատանքի բոլոր թերություններին— իսկ այդ թերությունները շատ են— իրազործեցինք առաջին հնդամյակի հիմնական ինդիրները, իսկ վճառական ջյուղերում վոչ միայն իրազործեցինք, այլև գերակատարեցինք դրանք, ապա այժմ, յերկրորդ հնդամյակի սկզբից՝ մենք հսկայական հնարավորություններ ունենք՝ այն ել շատ կողմէրով ընդարձակ հնարավորություններ՝ լուծելու համար սոցիալիզմի կառուցման նոր, խոշորագույն ինդիրները: Մենք յերկրորդ հնդամյակի առաջին տարվա ինդիրների իրազործմանը ձևոնածուիս յեղանք՝ զդալի չափով ամրապնդված ուժերով, վարոնք ավելացել ու ել ավելի աճում են որևոր:

Վորոնեժ են 1933 թվականի մեր հիմնական տնտեսական խնդիրները:

Քանի վոր ե՛ արշյունարերության մեջ, ե՛ գյուղատնտեսության մեջ, ե՛ քաղաքի ու գյուղի տորբանքաշրջանառության մեջ սոցիալիստական տարրերն արդեն հօտտատապես տիրապետող դիրք են զրայիլ, մենք սոցիալիստական ձևերի առաջընթացի հարցում հետազայում ևս առաջ շարժվելով՝ չենք առաջադրում քանակական բնույթ կրող խոշոր ինդիրներ: Այս տարվա սպանի համաժայն, այսպես կոչված «սոցիալիստական հատվածը», բայց սպանի լավ և առել՝ տնտեսության սոցիալիստական ձևերը, ընդողիկելու յեն մեր տնտեսության ժողովրդական յեկամաթի մոտ ինը տառներորդ մասը (88,5 տոկոսը): Սակայն այդ յեկամունք արդեն 1932 թվականին կազմում եր 87 տոկոս, ուստի կարիք չկտայիմ շատ ծանրանալ մեր տնտեսության մեջ սոցիալիստական ձևերի ունեցած դերի վրա: Նրանք տիրապետում են այդտեղ, և տիրապետում են ինչպես հարկն ե:

Պահն ուրվադում ե հսկայական աշխատանքներ հիմնական շինարարության առաջիկում: 1933 թվականի հիմնական աշխատանքները շինարարության բոլոր ջյուղերում՝ ամբողջովին վերցրած՝ կազմում են 18 միլիարդ ռուբլի: Հետեապես ավելի յեն լինելու թեպետ վոչ չատ՝ նրանից, ինչ վոր կտարել եյինք մենք անցյալ տարի, վարն ամենից ավելի զգոր թափ ուներ ամբողջ նախօրդ շրջանի ընթացքում: Ինչ վերաբերում ե ինդուստրիալին, ապա 9,164,000,000 ռուբլու գոխարեն յերկրորդ

հնդամյակի առաջին տարում արդյունաբերության հիմնական աշխատանքները կաղմելու յեն 10·109·000·000 ռուբլի: Այդ նշանակում ե, վոր այս տարի արդյունաբերության հիմնական աշխատանքները համարյա մի միլիարդ ռուբլով ավելի յեն լինելու, քան անցյալ տարի, իսկ դրանով ինդուստրիալի հիմնական շինարարությունն ավելանում ե 10 տոկոսով՝ համեմատած 1932 թվականի հետ:

Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի վերաբերամբ միմիայն չորս արտադրական ժողովրդատների (Մանք արդյունաբերության ժողովրդատի, Յեթև արդյունաբերության ժողովրդատի, Մատողկոմատի և Անտառժողովրդատի գծով) սլանն ուրվադում ե 16,5 տոկոս աճում: Դուք բոլորդ ել հիշում եք, իհարկե, ընկ. Ստալինի այն դիտողությունը, թե ինչ ե ներկայացնում այժմ մեզ մոտ արդյունաբերության արտադրանքի մի տոկոս աճումը: Իսկ մենք չե՞ վոր ինդիր ենք դրել արդյունաբերության արտադրանքը միմիայն մի տարում ավելացնել վոչ թե մի տոկոսով, այլ 16,5 տոկոսով, այսինքն՝ 1932 թվականի 29,2 միլիարդից այս տարի հասցեն 34 միլիարդ ռուբլու: Իսկ եւ լեկութեաներգիայի արտադրության առաջարիդում պլանն ուրվադում ե ավելի քան 25 տոկոս ավելացում:

Ինչ վերաբերում ե գյուղատնտեսությանը, ապա այսուղ, ինչպես նվազեք, կուսակցությունն ու կառավարությունը պահանջում են կենտրոնացնել ուշտգրությունը ըերբառվության բարձրացման վրա և վոչ թե ցանքների տարածության հետապա ընդաշնակման վրա: Այդ պահանով 1933 թվականին ցանքների ընդհանուր տարածությունը մոտավորապես համապատասխանում է նախորդ տարվա ցանքների տարածությանը, բայց դրա փոխարեն տարածությանը են հողագործության յուրաքանչյուր ճյուղի բերաբարձրությունը գնելու կոնկրետ ինցիդներ և այդ ինչն զիրները, ինչ զնով ել լինի, պետք ե իրականացվեն:

Մենք բարձր պահանջներ ենք առաջարկում նաև մեր տրանսպորտին: Այսպիս՝ յերկաթուղիների ընունաշրջանառությունը պետք ե ավելանա զդալի չափով, անցյալ տարվա միջին հաշվով որական 50·500 վագոն բեռնելու փոխարեն այս տարի մենք պետք ե ապահովենք որական միջին հաշվով 58·000 վագոնի բեռ-

նումը, վորը նշանակում է յերկաթուղարին տրանսդորտում բեռ-  
նաշրջանառության աճումը՝ 10 տոկոսով:

Վերջապես պետական բյուջեն, վորի մեջ հանդուցվում են մեր  
ամբողջ տնտեսության Փինանսավորման թեւերը և վորի զերը սոս-  
ցիալիստական շինարարության մեջ առանձնապես մեծ է այս տա-  
րի, նույնպես զգալի չափով պիտի աճէ: Գետական բյուջեի յե-  
կամտային մասը 30 միլիարդից պետք է հասնի 34,7 միլիարդի,  
այսինքն՝ ավելանալու յի համարյա 16 տոկոսով՝ համեմատած  
անցյալ տարվա հետ: Այդ խնդրի իրականացումն զգալի չափով  
հիմնված է այն բազմաթիվ պարտավորությունների վրա, վոր  
տառնուում են տնտեսական կազմակերպությունները պետության  
հանդեպ, և պահանջում է հոկայական աշխատանք ու բյուջետա-  
յին ամենախստ կարգապահություն գործնականում:

Քաղաքին և դպրության արդյունաբերական ապրանք հայթայ-  
թելու, բանվորներին ու ծառայողներին մթերք մատակարարելու  
ասպարիզում, մենք կարող ենք և պնտք և ապահովենք հետազա  
բարելավումը, առանձնապես բարելավելով այդ գործի կազմա-  
կերպումը: Նկատի ունենալով, վոր արդյունաբերական ապրանք-  
ների Փոնդերը և պարենային Փոնդերը պետության ձեռքում ավե-  
լանալու յեն 1933 թվականին, իսկ բանվորների ու ծառայողներու  
ընդհանուր թիվն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ՝ հա-  
մեմատած անցյալ տարվա հետ՝ վորոշ չափով՝ նույնիսկ կրճատու-  
վելու յի ՝—մենք բոլոր հիմքներն ունենք, վորպեսդի հետազա  
քայլն անենք զետի առաջ արդյունաբերական ապրանքների և  
մթերքների մատակարարման ասպարիզում: Այդ առաջին հերթին  
վերաբերում է հիմնական արդյունաբերական շրջաններին, հիմ-  
նական արդյունաբերական կաշըներին:

Կուլտուրական շինարարության առարկանում աճման համար  
պլանի ուրվագծած տեմպն, իրեն կանոն, զգալի չափով բարձր ե  
տնտեսության ասպարիզում ընդունված տեմպից:

Այդպես ուրեմն, յերկրորդ հնդամյակի առաջին տարում կու-  
սակցությունը նոր, խոշորագույն խնդիրներ ե զնում բանվոր դա-  
ստակարգի և կոլտնահսօնական գյուղացիության առաջ: Այդ այլանի  
կատարումը հանդիսանալու յի հետադարձ խոշոր առաջխաղացում  
տնտեսության բոլոր ճյուղերում և բանվորտիկան ու գյուղացիա-  
կան մասամերի նյութական ու կուլտուրական մակարդակի հետա-

ղա բարձրացում: Այդ խնդիրների իրականացումն անպայ-  
ման պահանջում է զգալի չափով բարելավել մեր ամրող  
աշխատանքը: Այդ խնդիրները հնարավոր ե իրականացնել  
միմիայն այն դելքում, յեթե մենք ապահովենք աշխատան-  
քի արտադրողականության բարձրացման պլանի կատարումը  
մեր արդյունաբերական ձեռնարկություններում, կոլտնտեսու-  
թյուններում և խորհանակառություններում, և յեթե ամրող  
կառավարման գործում մենք նույնպես եյական բարելավումներ  
մտցնենք այս տարի: Վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր  
մենք անհրաժեշտ նախադրյալներ ունենք դրա համար և վոր ու-  
ժերի հորեկիզացիան արդեն սկսվել է: Ուրվագծված ինդիրների  
իրազորդումը կախված է մեղնից, կախված է այն ակտիվությու-  
նից, վորը կցուցաբերենք մենք այդ խնդիրների կատարման հա-  
մար պայքար ծավալելու և այդ նորատակով մասսաներին կաղ-  
մակերպելու ասպարիզում:

## I

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ընթացիկ տարում արդյունաբերության խնդիրների հանդույ-  
ցր զտնվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման  
մեջ: Դա հիմնական ու կենտրոնական հարց է: Դժվար չե բացա-  
տրել այդ:

Մենք մեր առաջ խնդիր ենք գնում արդյունաբերության ար-  
տադրաներն ավելացնել 16,5 տոկոսով: Ընդումին բանվորների ու  
ծառայողների ընդհանուր թիվն ավելանալու յի ընդամենք յերկու  
տոկոսով: Դրանից արդեն յերեսում է, վոր առաջազդված խնդիրը՝  
արդյունաբերության արտադրանքի ավելացումը, հետարարու և  
գլուխ բներել միմիայն մի պայմանով՝ յեթե համեմատափառ չա-  
փով բարձրանա աշխատանքի արտադրողականությունը մեր ար-  
դյունաբերության մեջ: Ամբողջովին վերցրած մեր արդյունա-  
բերության համար անհրաժեշտ է այս տարի աշխատանքի արտա-  
դրողականությունն ավելացնել 14 տոկոսով:

Հետո յեն զեռ կանգ կառնեմ տայն հորցի վրա, թե ինչ է նշա-

նակում դա ամբողջ բանվոր դասակարգի և նրա առանձին խթմ-  
րերի համար։ Սակայն նախ և առաջ յես կրեքեմ Լենինի այն ցու-  
ցումները, վորտեղ արտահայտված և աշխատանքի արտադրողա-  
կանության բարձրացման ամբողջ մեծ նշանակությունը մեր պայ-  
մաններում։ Ահա թե ինչ և առում Լենինն այդ առթիվ։

«Կոմունիզմը հանդիսանում է կամավոր, գիտակցաբար  
ժիացած, առաջավոր տեխնիկան ոգտագործող բանվորների  
աշխատանքի բարձրացույն արտադրողականությունը կա-  
պիսալիստականի հանդեպ...»

Կոմունիզմն սկսվում ե այստեղ, վորտեղ Հրապարակ  
ե գույն շարքային բանվորների անձնվեր, ծանր աշխատան-  
քը հաղթահարող հոգատարությունն աշխատանքի ար-  
տադրողականությունն ափելացնելու, յուրաքանչյուր փութ-  
հացը, ածուխը, յերկարը և այլ մթերքները պահպանելու  
չուրջը, վորոնք ընկնում են վոչ թե անձնապես  
աշխատանքների և վոչ թե նրանց «մերձավորնե-  
րի» ու «հեռավորների» ձեռքը, այլ ամբողջ հասարակու-  
թյան, նախ՝ մի սոցիալիստական պետության, ապա՝ խոր-  
հրդացին հանրապետությունների միության մեջ միացած  
տասնյակ և հարյուրավոր միլիոն մարդկանց ձեռքը» (Լե-  
նին, «ՄԵծ նախաձեռնություն», 1919 թ.)։

Այժմ բերեմ Լենինի բացարություններն այն պայմանների  
մասին, վորոնք անհրաժեշտ են աշխատանքի արտադրողականու-  
թյունը բարձրացնելու համար։

«Աշխատանքի արտադրողականության բարձրացումը  
նախ և առաջ պահանջում է ապահովել խոշոր ինդուստրիա-  
լի նյութական հիմքերը՝ զարգացնել վառելամեջութիւնը, յեր-  
կաքի արտադրությունը, մեքենաշինությունը, քիմիական  
արդյունաբերությունը...»

Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու  
մյուս պայմանն է, նախ՝ աղգարնակության մասսայի կրո-  
թական և կուլտուրական վերելքը։ Այժմ այդ վերելքը կա-  
տարվում է հսկայական արագությամբ, վորը չեն տեսնում  
բուրժուական հնամուռությամբ կուրացած մարդիկ, վորոնք  
անընդունակ են հասկանալու, թե ինչպիսի թոիչք ե կա-  
տարվում այժմ ժողովրդի խորքերում զեղսի լույսն ու նա-

խաձեռնությունը՝ չնորհիվ խորհրդային կազմակերպու-  
թյան։ Յերկրորդ՝ տնտեսական վերելքի պայմանն և հան-  
դիսանում նաև աշխատավորների մեջ կարգապահության  
բարձրացումը, աշխատել զիտենալը, բնդունակ լինելը,  
աշխատանքների ինտենսիվությունը, նրա լավագույն կազմա-  
կերպումը» (Լենին, «Խորհրդային իշխանության հերթա-  
կան խնդիրները», 1918 թ.)։

Վերջապես, յես կմտանանչեմ Լենինի մի ցուցումն ևս այդ  
հարցի չուրջը։ Լենինն ասում է՝

«... Գնալով գեղի աշխատանքի արագարազականու-  
թյան բարձրացումը, ոկտոք և հաշվի առնել կատիտալիզմից  
սոցիալիզմին անցնելու միջանկյալ ժամանակվա / այն ա-  
ռանձնահատկությունները, վորոնք պահանջում են մի կող-  
մից, վոր գրվեն մրցության սոցիալիստական կազմակերպ-  
ման հիմքերը, իսկ մյուս կողմից պահանջում են կիրառել  
հարկադրումն այսպես, վոր պրոլետարիատի դիլուսու-  
րայի լողունքը չողծվի պրոլետարական իշխանության հեղ-  
հեղուկ վիճակի պրակտիկայով» (Լենին, «Խորհրդային իշ-  
խանության հերթական խնդիրները», 1918 թ.)։

Լենինի այս դիտողությունների մեջ պարզունակվում է այն հիմ-  
նական նշանակությունը, վորն ունի աշխատանքի արտադրողա-  
կանության բարձրացումը մեր յերկրում, այն հիմնական պայ-  
մանները, վորոնք անհրաժեշտ են դրա համար։

Լենինն առանձնապես շեշտում է, թե ինչ նշանակություն ու-  
նի «շարքային բանվորների հոգատարությունն աշխատանքի ար-  
տադրողականությունն ամելացնելու, ամեն մի փութ հացի, ած-  
խի, յերկարի և այլ մթերքների պահպանման չուրջը»։ Միթե  
զա ամենաանմիջական կերպով չի վերաբերում ընթացիկ մոմեն-  
տին։ Այսուհետև, Լենինը ճիշտ մատնանշում է, թե ինչ և պա-  
հանջում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու  
համար և ընդունմին առանձնապես ընդգծում ե արդյունաբերության  
նյութական հիմքի պահպանումը, մասսաների կրթական ու կուլ-  
տուրական վերելքի առկայությունը, վորը նրա կարծիքով խոր-  
հրդացին իշխանության որոք «առաջ և գնում հսկայական արա-  
գությամբ», և «աշխատավորների կարգապահության բարձրացու-  
մը, աշխատել զիտենալը, բնդունակ լինելը, աշխատանքի ինտեն-

ովկությունը, նրա լավագույն կաղմակերպումը»: Դրա հետ միասին չի կարելի չափանիկ, զար այդ բոլոր բնագավառներում մենք այժմ բազմազատիկ ավելի նպաստավոր պայմաններ ունենք աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, քան այն չըջանում, յերբ պրել ե Լենինը դրա մասին: Լենինը, վերջապես, ուղղակի ասում ե, թե աշխատանքի արտադրողականության բարձրացումը կախված է ինչպես «մոցության սոցիալիստական կաղմակերպումից», այնպես ել «հարկադրման կիրառումից, այսպես, վոր պըստեարիստի դիկաստուրայի լոգունովը չողութիւնը պըստեարական իշխանության հեղհեղուկ վիճակի պըրակաիսայով»: Եեվ այդ ցուցումներն ամենաակտուալ բնույթ ունեն սովոր օգայմաններում:

Ի՞նչ ե նշանակում աշխատանքի արտադրողականության բարձրացումն արդյունաբերության առանձին ճյուղերում, վոր ուրբագել և պլանը: Այդ կարելի յէ բացարել հետեւյալ թվերով.

Մանր արդյունաբերության ժողկոմատի համար, վորտեղ արտադրանքի աճումը պետք է կազմի համարյա 22 տոկոս, աշխատանքի արտադրողականության բարձրացումը պետք է կազմի 16,5 տոկոս: Թիեր արդյունաբերության ժողկոմատի համար, վորտեղ ուրիշ ճշգած է արտադրանքի 10 տոկոս աճում, աշխատանքի արտադրականության բարձրացումը պետք է կազմի 12 տոկոս: Մասմաշինմատի համար, վորտեղ արտադրանքն ավելանալու յէ 13 տոկոսով, պահանջնում է աշխատանքի արտադրողականությանը բարձրացնել 15 տոկոսով: Անտառժողկոմատի համար, վորտեղ արտադրանքն ավելանալու յէ 12 տոկոսով, աշխատանքի արտադրողականությունը պետք է բարձրանա 18 տոկոսով: Ենաբարության ասպարիզում, վորտեղ զդալի չափով վատ և աշխատանքի արտադրողականության բարձրացման գործը, պահանջնում է 25% ուրիշ բարձրացնել աշխատանքի արտադրողականությանը 1933 թ. ընթացքում: Աշխատանքի արտադրողականության բարձրացման տոկոսների տարբերությունը կախված է ինչ միայն արտադրանքի աճման չափից, այլև մի չափ այլ համապատասխան բազան, հումքը և այլն):

Այն, վոր աշխատանքի արտադրողականության ուրբագելած բարձրացումը լուրջ և բավականաշատ դժվարին գործ ե, կարելի յէ անհներ հետեւյալից: Ամբողջ առաջին հոգածյակի ընթացքում

արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունն ամելացավ 40 տոկոսով: Ճիշտ ե, ծանր արդյունաբերության մեջ ե մանականդ նրա միջանի ճյուղերում աշխատանքի արտադրողականությունն զգալի չափով ավելի յն բարձրացել: Սակայն, ընթացիկ տարվա համար ուրբագելած առաջարկանքն ավելի լարացր ե, քան վերջին չորս տարվա արտադրողականության բարձրացման միջին մակարդակը: Աշխատանքի արտադրողականությունն առանձնապես անբավարար վիճակի մեջ եր անցյալ տարի, յերբ արտադրական հիմնական ժողկոմատների արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության աճումը կազմեց ընդամենը մի տոկոս, այն ել ամբողջութիւն իհաշիկ ծանր արդյունաբերության (ավելի ճիշտ՝ նրա միջանի ճյուղերի), վորտեղ այդ աճումը հինգ տոկոսից ավելի յէր:

Համեմատենք աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում այս տարի առաջարկած խնդիրները կապահանիստական յերկրներում համապատասխան մասշտաբների հետ: Ահավասիկ միջանի տվյալներ այց հարցի վերաբերյալ: Ամերիկացի Ստյուարտ Զեյզը Հ. Ա. Միացյալ Նահանգների պարուղերինից» (բարդավանման) շրջանի հատուկ նվաճումն եր համարում, յերբ այնտեղ հինգ տարվա ընթացքում աշխատանքի արտադրողականությունը բարձրացել եր 25 տոկոսով: Անդիմայսմ ճզնաժամին նախորդող ամբողջ հնդամյակի ընթացքում (1924—1929 թվականներին) աշխատանքի արտադրողականության առաջնային տոկոսով: Գերմանիան 1913 թվականից մինչև 1931 թվականն ընկնող ամբողջ շրջանում ունեցել ե աշխատանքի արտադրողականության բարձրացում ընդամենը 27% (համաձայն գերմանացի տնտեսագետ Կուչինսկու տվյալների): Հնեւեաբար առաջին հնդամյակում աշխատանքի արտադրողականության աճման առաջին մեր ձեռք բերած տեմպն անհատանելի յէ կապիտալիստական յերկրների համար: Սակայն քերկորդ հնդամյակի առաջին տարում մենք պետք ենոր քայլ անենք դեպի սուած՝ այդ տեմպն ուժեղացնելու ուղղությամբ:

Վորովելի պարզաբանենք, թէ ինչ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության համար աշխատանքի արտադրողականության բարձրացմանը մեր արդյունաբերության մեջ, յն պետք է ասեմ, վոր 1933 թվականի ընթացքում աշխատանքի ար-

տաղրողականության բարձրացման յուրաքանչյուր տոկոս տալու յի մոտ 290 միլ. ռ.։ Այսպիսով ընթացիկ տարում աշխատանքի արտադրողականության ամրող բարձրացումը (չորս ժողկոմատների գծով) այս տարի պետք է տա պետությանը չորս միլիարդ ռուբլով ավելի ընդհանուր արտադրանք։ Ինչպես աեսենում եք, իսուսքը վերաբերում է պետության համար շատ լուրջ գործի։

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը կարևոր տարր տարր է հանդիսանում մեր արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու գործում։ Իսկ այդ խնդիրը, ինքնարժեքի իջեցման խնդիրը, արտադրանքի վորակի անպատճառ բարելավման պայմանով, այս տարի ևս ամենասուր կերպով դրված է մեր առաջ։ Ընթացիկ տարում մեր առաջ խնդիր է դրված իջեցնել մեր արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը և տոկոսով (ավելի ճիշճ՝ 3,9 տոկոսով)։ Առաջին հայացքից այդ առաջադրանքի կատարումն առանձին գժվարություններ չի ներկայացնում։ Սակայն, վերջին տարիների փորձը գալիս է ասելու, զոր հենց այդ գործում՝ արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի իջեցման գործում մենք առանձնապես թույլ տեղ ունենք։ Զնայած մենք հաղթականորեն ավարտեցինք առաջին հընդագմայակը, ամրող արդյունաբերության մեջ ինքնարժեքի իջեցման գործում մենք վորեն տեղաշարժ չկատարեցինք։ Դեռ ավելին՝ վերջին տարին մի շաբաթ ճյուղերում ինքնարժեքի իջեցման ընալավառում մենք վոչ թե առաջ, այլ զետի հետ զնացինք։ Մինչդեռ այն խնդիրը, վորի համաձայն մի տարվա ընթացքում ամրող արդյունաբերության մեջ ինքնարժեքը պետք է իջեցվի չորս տոկոսով, խորհանտեսություններում՝ 8 տոկոսով և շնչարարության ասպարիզում՝ 15 տոկոսով, պետք է անպայման իրադուրծվի։

Պարզաբանելու համար թե ինչո՞ւ անցյալ տարի վատացել եր ինքնարժեքի իջեցման գործը, յետ կմատնանշեմ հետեյալը։ Վերահիշյալ չորս ժողկոմատներում արդյունաբերության առագանքն անցյալ տարի ավելացավ 8,5 տոկ.։ Միենույն ժամանակ աշխատավարձի համապատասխան ֆոնդն աճեց զգալի չափով ավելի։ Իսկ աշխատավարձի ամրող ֆոնդը (արդյունաբերության, խորհանտեսությունների, շնչարարության և կառավարման առարկաների գծով) ավելացավ 27 տոկ.։ Վորը զետի չափով զերազանցում

ե պլանային ուրվագծերը, և չենք ասում այն, վոր այդ պլանացին ուրվագծերն արված ենին արտադրական ու շնչարարական պլանները մովիին կատարելու խնդրին համապատասխան։

Այդ բոլորից բղխում է այն, վոր աշխատանքի արտադրութականությունը բարձրացնելու և ինքնարժեքն իջեցնելու համար մղվող պայքարն այս տարի մենք պետք է դնենք մեր ուշադրության կենտրոնում և բայց լինելու համար չափավոր գործը։

Մենք չենք կարող հաշտվել նաև այն դրության հետ, վորի մեջ գտնվում է արդյունաբերական արտադրանքի վորակի հարցը։

Մեզ մոտ այնքան արագ են աճում ժողովրդական անտեսության պահանջները և ժողովրդական մասսաների պահանջները, վոր դրանց բավարարումը հետ և մնում մեր ձեռնարկությունների առաջադրանքի աճումից։ Հաճախ զա ունենում է այն հետեւանքը, վոր միանգամայն անրավարար ուշադրություն է դրաձվում արտադրանքի վորակին։ Մինչդեռ այն գիճակը, վորի մեջ գտնվում է արտադրանքի վորակը մի շաբաթ ճյուղերում, ներառյալ նույնիսկ մեր արդյունաբերության պահավոր ճյուղերը, չի կարելի նորմալ համարել։

Որեւս Գորկու ավատործարանը Մոսկվա ուղարկեց իր արտադրութ առաջին 50 մարդատար ավտոմոբիլները։ Իրազեկ ընկերների առելով, խորհրդացին արտադրությունը հանդիսացող այդ առաջին մարդատար ավտոմոբիլները վատ չեն իրենց հիմնական մասներով՝ մոտորի, շառսի, զեկի կողմից։ Այսկայն դժբախտաբար գուրս յեկավ, վոր այդ ավտոմոբիլները վարում կողմերից զեռ բոլորովին վտան։ Այդ նախ և առաջ վերաբերում և նրանց կուզովին և նրանց ներքին պատերին, զռնակների ու կոթերի կառուցվածքին և այն։ Չի կարելի, իւսարկե, ժիստել Գորկու ավտոմոբիլարանի հաջողություններն ավտոմոբիլի վերոճիշյալ կարեռագույն մասների նկատմամբ։ Սակայն չե՞ վոր մեղ հարկավոր և վոչ թե պարզապես լավ մոտոր ավտոմոբիլի համար, վոչ թե պարզապես դիմացկուն շասսի և զեկ։ Մեզ հարկավոր ե՝ պարզ ասած, լավ մարդատար ավտոմոբիլ։

Մեզ հարկավոր ե խորհրդացին մարդատար ավտոմոբիլ, այն ել այնպիսին, վոր նրանով կարելի լինի յերթեեկել վոչ ավելի վատ, քան բուրժուական ավտոմոբիլով։

Իսկ զետ վորքա՞ն մեծ և մեզ մոտ խոտանի տոկոսն արդյու-

նարերական արտադրանքի մեջ։ Զի կարելի չխոսառվանել, վար այդ տեսակից մեզ մոտ քիչ չեն միանգամայն անբարեհաջող բնագավառներ արդյունաբերության մեջ։

Ուստի հանկանալի յէ, վոր «առաջին հնդամյակի արդյունք» ներին և 1933 թվականի ժողովրդական անտեսության պլանին» վերաբերյալ բանաձեռում մատնանշված է, թէ անհրաժեշտ է հետադայում գլխավոր ուժը «կենտրոնացմել վոչ թէ բանակական անման, այլ արդյունաբերության մեջ արտադրանքի վարակի բարելավման և աշխատանքի արտադրողականուրբյան բարձրացման վրա»։

Առաջազդություն այդ խնդիրները, մենք պետք են տեսնենք, թէ վորն է գրանց կատարման համար անհրաժեշտ արտադրական տեխնիկական բազան։ Դրա վրա ավելի մանրամատնորեն կանգ կտոնի ընկ. Կույրիշեվը։ Խոկ յես այսուղ կահմանափակվեմ միմիայն համառու դժուազություններով։

Առաջին հնդամյակը հաստատածես վոտքի կանդնեցրեց մեր ծանր արդյունաբերությունը և դրանով խորհրդային բազա ստեղծեց ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու համար։ Առաջին հնդամյակի շրջանում արդյունաբերության խոչորակույն ճյուղերն արգեն զգալի չափով անցան իրենց վերակառուցման շրջանը։ Դրա չնորհիվ այժմ մենք ունենք հիմք ավարտելու վոչ միայն արդյունաբերության, այլև գյուղատնտեսության ու տրանսպորտի, այսինքն՝ ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը։

Մինչև 1932 թվականի հունվարի մեկը մեր արդյունաբերության հիմնական կատարալը հեղափոխության տարիներին չնորոգվեց արդեն 57 տոկոսով։ Այսպիսով արդյունաբերության հիմնական ֆոնդերի կեսից զգալիորեն ավելի մասը նորոգվել է զերշին տարիներու և զիսավլորապես վերակառուցման շրջանում։ Մասն արդյունաբերությունը նույն ժամանակաշրջանում՝ իր հիմնական կապիտալ նորոգեց ավելի քան յերկու յերրորդ մասով։ Կան արդյունաբերության առանձին ճյուղեր, ինչպես ածխի, նավթի արդյունաբերությունը և ելեկտրոկայանները, վորտեղ հիմնական ֆոնդերը նորոգվել են ավելի քան յերեք քառորդ մասով։

Դրան ավելացրեք նաև այն, վոր աշխատանքի այսպես կոչված եներդողինվածությունը, այսինքն՝ արդյունաբերության մեջ յուրաքանչյուր բանվորներ համար մեխանիկական ու ելեկտրական ներդիմակի քանակը միմիայն առաջին հնդամյակի ընթացքում ավելացել է 41 տոկոսով, խոկ աշխատանքի անմիջական ելեկտրոգինվածությունը բարձրացել է ավելի քան յերկու անգամ։ Սյուրությունը վելայում է, վոր հակայական չափով աճել է մեր ամրող անտեսության ու նախ և առաջ մեր արդյունաբերության տեխնիկական բազան։

Երբ կաթուղային տրանսպորտի նկատմամբ մենք զգալի չափով հետո ենք մնացել աելինիկական վերակառուցման բնագավառում։ Մինչդեռ 1933 թվականին արդյունաբերությունը պետք է արգեն խոչը քայլ անի գեղի առաջ մեր յերկաթուղային, մասամբ նաև դրային տրանսպորտի ժամանակակից տեխնիկական վերակառուցման գործում։ Այս տարի իրագործելելու յէ ուժեղ շողեքարշերի ու վագոնների արտադրության մեծ ծրագիր։ Բացի դրանից, զգալի չափով ընդարձակվելու յէ ինքնարդելակների և ինքնակապերի արտադրությունը՝ յերկաթուղիներում ել ավելի տարածելու համար։

Սակայն մենք բավ զիտենք, վոր բանը միայն այն չե, վոր կառուցենք ժամանակակից արդյունաբերական տիպի նոր ձևունարկություններ, նորադաշն սարքավորում հայթալիքն արդյունաբերության այս կամ այն ճյուղեն։ Դրանից հետո ծագում է նոր արտադրության տեխնիկային տիրապետելու հարցը, նոր ձեռնարկությունները և նոր տեխնիկան յուրացնելու հարցը։ Խոկ այդ կողմից մենք դեռ մինչեւ այժմ ել հանդիպում ենք հական գեղարդությունների, վորոնց հաղթահարումը քիչ ժամանակ չի պահանջում։

Մենք որինակներ ունենք, վոր յավ ե կիբառվել և հաջող ողոագործվել արդյունաբերության ամբողջ ճյուղերի վերակառուցումը։ Որինակ՝ նախթարդյունաբերության վերակառուցումը։ Դրա չնորհիվ մենք արագորեն խոչըրագույն հաջողություններ ձեռք բերինք առաջին հնդամյակի պլանի կատարման ասպարիդում, վորոնք այժմ վոչ միայն չի կարելի թույլ տալ վիճեցնել վատ աշխատանքով, այլ մենք պետք ե ինչ գնով ել լինի զարդացնենք ել ավելին։ Մյուս կողմից մենք որինակ ունենք, վոր զգալի

քանակությամբ նոր ստրօտոպում և մոցված ածխարդյունաբերության մեջ, վորը դեռ քիչ թե շատ լուրջ հաջողություններ չի բիուլէ: Ընդհակառակը, անոտք և ընդդեմ, վոր ածխարդյունաբերության մեջ դեռ ամեն ինչ բավարար չե, չայցած դոյցություն ունեն տեխնիկական մնած նախառյաշներ ածիքի հանույթն զգալի շավով ավելացնելու համար: Արտակըրսության տեխնիկային լավ տիրապետելու որինակ կարող և ծառայել մեր արակտորային արդյունաբերությունը: Այդ յերեսում և թեկուղ հետեւալից: Յեթե Սատրինդրադի տրակտորի գործարանն իր գործարկման առաջին աարին տվել և 5.217 տրակտոր, ապա Խարկովի նրան հավասար տրակտորի գործարանը, վորը կառուցվել և քիչ ավելի ուշ, իր գործարկման որից մի տարվա ընթացքում ավեց 13.475 տրակտոր:

Եսու ավելի սրբնակներ կտրելի յերել, թե վորքան վատ, իսկ յերբեմն ուղղակի հաջաղործ անփույթ կերպով և ողտակործությունում նորացույն, ներառյալ նաև ներմուծված ստրօտումը նույնիսկ մեր լավ գործարաններում: Նույն այդ Խարկովի տրակտորի գործարանում, մինչեւ վերջին ժամանակներս, ներմուծված գազույտների բավականաչափ դեպքի մասը չեր աշխատում, բանվորական դաշտահաների բեռնախծությունը միանդամայն, անբավարար էր, շատ վրալի չափի յեր հասնում գորշյաների ու մեխանիզմների կոռարմելը, ըստ վորում մեծ մասամբ տնտեսությիւնը վերաբերվելու և դոշածել չի հանալու պատճառով, ինչ սկս և վատ ինամքի, մոնաւածի ու նորոգման պատճառով: Դորկուավորությունը ստրօտում ստրօտում ստրօտում կոտրվելը, այն ել դարձյալ դիմավորակն վատ խնամքի և անփույթ ու անուշադիր վերաբերում քի պատճառով, նույնպես մեծ չափի յեր հասնում: Իսկ դեռ վորքան չողտագործված ամենաթանգարին ներմուծված ստրօտում վեր և ընկած նավթային տրեստների, ցեմենտի արդյունաբերության պահանարաններում, Սակնիստոգորսկում, Բերդիկում և այլն: Վերջապես ֆողովրդական անտեսության հաշվառման կենտրոնական վարչության 1932 թվականին կատարած վիճակարության ավցաներով յերեան և բերքած մեծ առկօտով չողտագործված և նույնիսկ մինչեւ վիճակարությունը չառքարգաված ժեքնաների մեծ առկոս:

Այդ բոլորը և շատ ուրիշ որինակներ վկայում են, վոր մեր

արդյունաբերության մեջ արդեն կատարված տեխնիկական վերակառուցումը մինչ դեռ չափազանց անրավարար ենք ոգտագործում, վոր մենք հոկայական ոեցերվենք ունենք զործն արագործեն բարելավելու համար, վոր մեր առաջընթացը տեխնիկային տիրապետելու ուղղությամբ կարող և արագործեն զգալի արշյունքներ տալ: Այսպիսով, մեր արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար այժմ կան արտադրական տեխնիկական այնպիսի նախադրյալներ, վարոնիք առաջ շնչ յերել և չեյին կարող լինել: Մեղ մոտ շատ են չողտագործված ներքին ուսուրաները, անհրաժեշտ և միայն բայց կերպներն ուղայքար ծավալել նոր գործարաններն ու նոր տեխնիկան յուրացնելու, աշխատանքի կազմակերպումը բարելավելու և աշխատանքային կարգավագնությունն ամրացնելու համար:

Մեղ մոտ վոչ միայն զգալի չափով առաջ և զնացել արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը, այլև առաջին հընդգամյակի շրջանում մենք վիթխարի քայլ ենք արել նաև վորակյալ բանվորական ու ինժեներասեխնիկական ուժերի կազրեր ստեղծելու գործում:

Վերջին չորս տարվա ընթացքում մեր արդյունաբերության մեջ ներգրավվել են յերկու և կես միլիոն նոր բանվորներ, վորոնցից մոտ յերկու միլիոն հոգի անցել և վորակյալ աշխատանքի: Այդ բանվորների մեծ մասն առաջ վոչ հասկացողություն չի ունեցել այն գաղղրահների, դորժիքների ու մեքենաների մասին, վորոնց հանդիպել և զործարաններում:

Բայց առաջին հնդամյակի տարիները զուր չեն անցել մեզ համար: Անինի այն ցուցումը, թե աշխատանքի արտադրողական նույնունը բարձրացնելու համար մեծ նշանակություն ունի աղդաբնակության մասսայի կրթական ու կուլտուրական մակարդակի բարձրացաւմը, մենք հաշվի յենք առել ժամանակին: Հնդամյակի տարիներին մենք հսկայական տեղաշարժ կատարեցինք անդրագիտության վերացման գործում: Դեռ շատ ժամանակի չե, վոր մեր աղդաբնակության ավելի քան կես մասն անդրադեռ էր: Այժմ անգրագետների թիվը կազմում է 10 տոկոսից պակաս: Հակայական մասնաշտարով ծավալվեց նաև կուլտուրական այլ աշխատանք մասսաներում: Մյուս կողմից՝ հնդամյակի տարիներին բանֆակի ուսանողների թիվը ավելացավ 9 անդամ: Գործուներում սովո-

բողների թիվն ավելացավ 5 անգամ : Տեխնիկումներում սովորողների թիվը նույնպես ավելացավ 5 անգամ , իսկ բուհերում , տեխնիկական բուհերում սովորողների թիվը՝ 3 անգամ , ընդուռում անմիջականորեն արդյունաբերական տեխնիկական բուհերում առաջին հնդամյակի տարիներին ուսանողների թիվն ավելացել է նույնպես համարյա 5 անգամ : Մեր յերկրում տեխնիկական կադրերի արագ աճումը հնարավորություն տվեց մեզ 1-ին հնդամյակում կրկնապատկել մեր ձեռնարկությունների հաղեցվածությունը մասնագետներով (100 բանվորին 3,8 % մասնագետից հասցնելով 7 % մասնագետի) :

Այն հանդամանքը , վոր արդեն հակայական չափով նորողվել է մեր արդյունաբերության արթավորումը և արտադրության մեջ արմատացել են նորագույն տեխնիկայի շատ ճյուղեր , վերջին տարիներին վորոշ չափով արդեն սովորած բանվորների նոր կազմերի հոսանքը գեղի արտադրությունը , ինչպես և նոր , թեպետ և յերիտասարդ մասնագետների զգալի հոսանքը 2-րդ հնդամյակի սկզբից , կարող ե տալ գործնական մեծ արդյունքներ : Այդ պայմաններում աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արդրունաբերական արտադրանքի վորակի բարելավումը կարևոր յե և պետք է լիովին ապահովվի՝ համաձայն մեր պլանի :

Դեռ ավելին՝ աշխատանքի արտադրողականության բարձրացումն արդյունաբերության մեջ և արդյունաբերական արտադրանքի վորակի բարելավումը՝ համաձայն ընդունված տնտեսական պլանի , մեր տնտեսական աշխատանքի կենտրոնում պետք է զրոյի այս տարի այն պատճառով , վոր այդ խնդիրներին անհանային արդյունաբերության մեջ կուտայ պահանջում են արտադրանքը , ինչնոր խոսում ավտոտրակառային արդյունաբերության մասին , այս տարի ևս մեզ արված առաջադրանքները զգալի չափով ավելացնում են արտադրանքը : Այդ առաջարկանքները հնարավոր և իրականացնել միմիայն այն դեպքում , յերբ պատշաճ չափով պայքար մզվի աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու , ինչնարքին իշնցնելու , արագացնելու վորակը բարձրացնելու համար :

Նաև և կաղմակերպել այժմ միմիայն մեր բայց ներկայական ցությունը , վորի հետեւից հարածուն խանդավառությամբ դնում են մասսաները , վորի մեջ իրավամբ իրենց մահացությունը են տեսնում բուրժուական դասակարգերի բոլոր և ամեն տեսակ ուժեղը , ներառյալ նաև պարսնայք այլամբրվածները , ամեն դույնի մըլեղին ուղղորդումիտները :

Են չեմ խոսի արդյունաբերության առանձին ճյուղերի այս առաջադրանքների հետ կարգված առանձին խնդիրների մասին : Միայն պետք ե ասեմ , վոր ծանր արդյունաբերությունն այսակե ևս պետք ե տա ուղիղ տան ամբողջ դործէն : այդ բնագավառում ամենեղ ավելի տառշ և գնացել նոր հզոր տեխնիկական բաղականմակերպելու գործը : Նո ունի լավագույն բանվորներ ու տեխնիկական ուժերը : Սյատեղ մենք հիմք ունենք սպասելու ոոց մրցանակ ու հարվածայնության զարդարացման լավագույն որինակներ , ինչպես և արտադրության մեջ պրոլետարական անհրաժեշտ կարդարական բության բրագույն համար մեր արդյունաբերության մեջ , անհանային արդյունաբերության կարեւորակույն ճյուղերում՝ ևս ու զունավոր մետաղածուրման մեջ , անհարդյունաբերության և մեքենաշինության տակարգում , եւ չենք խոսում ավտոտրակառային արդյունաբերության մասին , այս տարի ևս մեզ արված առաջադրանքները լիովին ավելացնում են արտադրանքը : Այդ պայմանական պետք ե կանգ առնել ևս մետաղածուրման վրա :

Կենտրոնական կոմիտեի սեստամերերի պլենումը քննարկեց ևս մետաղածուրման վիճակը : Այդ ժամանակից ի վեր գործը շբարելավվեց : Մինչդեռ արդպեսի դրությունը մշանակամայն անհանդուրմելի յի : Ընթացյիկ տարրում ևս մետաղածուրման առարկությունը արտադրանքն ավելացնելու առաջադրանքները չափ գուշի յին թուջի նկատմամբ 44 տոկոս , սողոկատի նկատմամբ 53 տոկոս , ժամանակ յերկաթի նկատմամբ 48 տոկոս : Սակայն չի կարելի յե մոռանալ , վոր կաստորեն 1933 թվականի առաջադրանքները կրկնում են այն առաջադրանքները , վորոնք ուրվադրված ելին 1932 թ. համար , սակայն չեցին կատարվել : Այդպիսով այս

տարի մենք մետաղաձուլման ասպարիզում խնդիր ենք դնում կատարել անցյալ տարվա առաջադրանքները կամ այլ խոսքով՝ տարբեկան առաջադրանքը կատարել շատրւում:

Վորոշ բարելավում ձեռք բերինք մենք անցյալ տարի թուժի արտադրության բնաղավառում: Սակայն միանդամայն անթույլատրելի գրություն ունեցնք և շարունակում ենք ունենալ պողոպատի ու մամլած յերկաթի ասպարիզում: Վոչ մի դեպքում չթույցնեցվ մեր ջանքերը թուջի արտադրության գծով, մենք պետք են առանձնապես ուժգնորեն ձեռնամուխ լինենք պողպատի ու մամլած յերկաթի արտադրության վճռական բարելավմանը: Դրանից շատ բան են կախված մեր ամրող անտեսության հետաղա աճման համար: Դրանից են կախված նաև առաջ մեր ամրող մեքենայի նությունը, վորի աճումն այժմ դանդաղեցնում են և մետաղաձուլումը: Մեքենաշինական արդյունաբերությունը 1932 թվականին կարող եր տալ զգալի չափով ավելի մեծ աճում, քան պլանով նախատեսված 23 տոկոսը: Սակայն մեքենաշինության աճումը, վոր այնքան անհրաժեշտ են մեզ ամրող սոցիալիստական տնտեսության աճման համար, դանդաղում են պողպատի ու մամլած յերկաթի պակասությունից: Դրա հետ միասին մեր մետաղաձուլումը պետք են դնել այնպիսի դրության մեջ, վոր նա վառելանյութի ածիք ու կոկսի սուր կարիք զգա: Մետաղաձուլարանները պետք են ապահովված լինեն վառելանյութով: Ածխարդյունաբերությունն իր հերթին չպետք են խոչընդուն հանդիսանա և մետաղաձուլման բարձրացման համար: Ածխարդյունաբերության մեջ, մանավանդ նավթարդյունաբերության մեջ 1933 թվականն անցյալ տարվա նման չպետք են լինի: Մյուս կողմից՝ յերկաթուղարին տրանսպորտը պետք են կատարի իր խնդիրը: Յերկաթուղիները պետք են իրառ պետք են կատարի վառելանյութը ժամանակին մետաղաձուլարանները փոխարելը:

Այնուամենայնիվ զվարակոր խնդիրը հենց մետաղաձուլման մեջ են, արտադրության կազմակերպման գործում յեղած բոլոր անկարգությունները վերացնելու մեջ, անտեսական և տեխնիկական կաղըերի ընտրություն կատարելու մեջ, նրանց աշխատանքի իսկական ստուգում կազմակերպելու մեջ, տեխնիկական և տնտեսական գեկալարությունը բարձրացնելու մեջ:

Անենք այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է արտադրության

կազմակերպման, պետական ու տեխնիկական զեկույթաբան բնագավառում գոյություն ունեցող բոլոր թերությունները վերացնելու համար, վորպեսդի ինչ զնով ել լինի կատարենք վոչ միայն թուջի արտադրության պլանը, այլ և անսպայման պողպատի ու մամլած յերկաթի արտադրության պլանը:

## II

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Առաջին հնդամյակի հաջողությունների կարևորագույն ցուցանիշն են կոլեկտիվացման հաղթանակը գյուղատնտեսության մեջ: Կոլտնտեսությունների ու խորհանակությունների գործը հաղթանակեց վերջնականապես: Կոլեկտիվացումը հիմնականում ավարտվեց: Արդեն 1932 թվականին գյուղացիական ցանքսերի յերեք քառորդ մասը կատարում ելին կոլտնտեսությունները: Պարզ են, վոր այժմ գործը վերաբերում է վոչ թե հետագա կոլեկտիվացման տեմպին, այլ աշխատանքի կաղմակերպմանը կոլտընտեսություններում ու խորհանակություններում:

Վերջի վերջո, այսաեղ ևս զվարավոր աշխատանքի արտադրողականության բարձրացումն է: Դրա համար անհրաժեշտ է վճռառ բարելավիլ զյուղատնտեսության ասպարիզում մեր կատարած ամրող աշխատանքի վորակը: Գյուղատնտեսության ասօղարիզում տվյալ պահին մեր առաջ չի դրված ցանքսերի տարածության ել ամերի բնդարձակելու խնդիրը: Առաջին հեղամբակի բնդացքության ընդունությունը ըստ կարգադրանքի են բավականաշատ: Այժմ մեր պլիազոր զանքը պետք է կենտրոնացված լինի բերքատվության բարձրացման խնդիրի վրա:

Հենց դրանից ել յելնում և ժողովրդական տնտեսության 1933 թ. պլանը:

Այս տարի մենք ուրիշ գործել ենք բոլոր հիմնական մշակույթների բերքատվության բարձրացումը: Մեր յերկրում բերքատվությունը շատ ցած է: Առանձին մշակույթների նկատմամբ նա աղջակետի անթույլատրելի չափով ցած է: Այսակից ի միջի այլոց

Հետևում է, վոր բերքատվության արագ բարձրացման հեռանկարները ևս նշանակալի յեն մեղ մոտ:

Ի՞նչպիսի ծրագիր ունենք մենք այդ պործում 1933 թ. համար:

Մենք ընդհանուր առմամբ անփոփոխ պահպանելով ցանքերի տարածության 1932 թվականի չափը, խնդիր ենք դնում բարձրացնել բերքատվությունը հացարույսերի նկատմամբ 13 տոկոսվ, բամբակի նկատմամբ 8 տոկոսվ, վուշի նկատմամբ 20 տոկոսվ, արևածաղկի նկատմամբ 25 տոկոսվ, շաքարի նակնդեղի նկատմամբ 32 տոկոսվ:

Ինչպես տեսնում եք՝ առաջադրվել են միանդամայն կոնկրետ, գործնական խնդիրներ: Սակայն նույնիսկ ապահովելով այդ խնդիրների լիակատար իրականացումը՝ մենք դեռ շատ բանով հետ ենք մնալու մի շարք այլ յերկրների բերքատվության մակարդակից, յերկրներ, գորտեղ մեքենաների ու դարարտանյութերի կիրառումը և գյուղի ընդհանուր կուլտուրական մակարդակն զգալի չափով վաղուց արդեն ավելի բարձր ե, քան յեզել և մի ժամանակ մեր յերկրում: Սակայն այնքան ել հեշտ չեցա չերակա այդ և մյուս մշակույթների բերքատվության բարձրացման խնդիրների իրականացումը մի արդում: Այստեղ անհրաժեշտ է լուրջ աշխատանք կատարել կոլտնտեսականների մեջ, խորհութեական բանվորների ու աղբուի խնդիրական կաղըերի մեջ: Սակայն բերքատվության բարձրացման ասպարիֆում այժմ դրված խնդիրները վոչ մեխայն իրադարձելի յեն, այլ և մենայացման կարող են կենսագործվել ու պետք ե կենսագործվեն ինչ գնով ել լին: Մենք, բայց լինենք, հաստատապես պետք ե ասենք այդ տոսավել ևս այն պատճառով, վոր տվյալ դեպքում գործը նախ և առաջ կախված և մեզանից, մասնաներին կազմակերպելու մեր կարողությունից, մեր ակտիվությունից այն պայքարում, վոր մզվում ե աշխատանքի արտադրողականությունը կոլտնտեսական և խորհութեական արտերում բարձրացնելու համար:

Ավելորդ և ապացուցել, վոր առայժմ մեծ մասմբ մենք բավականաշատի վատ ենք անում այդ: Այնպիսի կարճ ժամանակամիջոցում, ինչպիսին ե յերեք տարին, յերբ մեղ մոտ ստեղծվել է 200 հազար նոր կոլտնտեսություն և 5 հազար նոր խորհութեական թյուն, չեր ել կարելի խոշոր արդյունքներ սպասել կոլտնտեսություն, ինչ ել կարելի խոշոր արդյունքներ սպասել կոլտնտեսությունների ու խորհութեական թյունների աշխատանքի արտադրողականությունը հաջող արդյունքներ:

թյունների ու խորհութեական թյունների աշխատանքի արտադրության առաջարկամասների աշխատանքի արտադրության բարձրացման ասպարիֆում, և այնուամենայնիվ մենք արդեն վորոց հաջողություններ ունենք:

Վերցնենք 1931 թվականի ցանքի կամպանիայի արդյունքները և իրար համեմատենք ՄՏԿ-ների սպասարկած կոլտնտեսություններում, ՄՏԿ-ների կողմից չսպասարկվող կոլտնտեսություններում ու անհատական անտեսություններում գոյություն ունեցող աշխատանքի արտադրողականությունը: Ի՞նչ ենք տեսնում մենք ուրեմն:

Դուրս և դալիս հետեւյլը.

ա) ՄՏԿ-ների կողմից սպասարկվող 7 միլիոն կոլտնտեսականների անտեսությունները ցանել են 35 միլիոն հեկտար, կամ այլ խոսքով՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի անտեսությունը՝ 5 հեկտար:

բ) ՄՏԿ-ների կողմից չսպասարկվող 8 միլիոն կոլտնտեսականների անտեսությունները ցանել են 31 միլիոն հեկտար, կամ ամեն մի կոլտնտեսականի անտեսությունը՝ մոտավորապես 4 հեկտար:

գ) 10 միլիոն մենատնտեսները ցանել են 19 միլիոն հեկտար, վորը կազմում և 2 հեկտարից դակաս ամեն մի մենատնտեսի անտեսության համար:

Այդպես ուրեմն՝ այժմ մենք ունենք ապելցուցիչ փաստեր, վորոնք ապացուցում են կոլտնտեսական աշխատանքի առավելությունները, մանավանդ կոլտնտեսական այն աշխատանքի առավելությունները, վորը միացած և ՄՏԿ-ների տրակտորների ու գյուղատնտեսական մեջնաների հետ: Զե՞ր վոր մեր բերած փառատերը վկայում են, վոր արդեն անցյալ տարի կոլտնտեսականների աշխատանքի արտադրողականությունը նույնիսկ առանց ՄՏԿ-ների ոգնության, յերկու անգամ ավելի բարձր ե յեղել անհատական անտեսության աշխատանքի արտադրողականությունը: Իսկ ՄՏԿ-ների կողմից դեկավարվագող կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականությունը հաջող արդյունքականությունը յերկու և կես անգամ բարձր ե, քան անհատական անտեսություններինը և ամ տոկոսով բարձր ե, քան ՄՏԿ-ների կողմից չսպասարկվող կոլտնտեսությաններինը: Ի՞նչպես ուրեմն զրանից հետո կոլտնտեսությունները չհաղթանակելին գյուղատնտեսության մեջ:

Բերենք մի որինակ ևս . անհատական գյուղացիական տնտեսությունն ըի՞ այն ել ավելի չատ գյուղատնտեսական մեքենա ունեցող քիչ թե չատ ունեսոր տնտեսությունների՝ հետազոտության տվյալների համաձայն, մի հեկտար գարնանացան ցորեն ցանելու համար դործադրվող աշխատանքը 1926—27 թվականներին կազմել է մոտ 15 բանվորական որ : Մյուս կողմից, ժողովրդական աշխատական գյուղավոր վարչության տվյալների համաձայն, Հյուսիսային կովկասի կոլտնտեսություններում մի հեկտար գարնան ցորեն ցանելու աշխատանքի համար 1931 թ. գործադրվել է 6 բանվորական որից մի թիջ մի թիջ ավելի : Վերջապես, նույն թվականին Զերնոսովիովի միավորման խորհարդատեսություններում մի հեկտար գարնան ցորեն ցանելու համար դործադրվել է 2 բանվորական որից քիչ ավելի : Խնչպես ուրեմն զրանից հետո կոլտնտեսությունները և խորհանուենությունները չպետք ե հաղթանակ տանեն բոլոր և ամեն տեսակ անհատական գյուղացիական տնտեսությունների նկատմամբ :

Յեվ այդ բոլորը տեղի յե ունենում չնայած կորոնտեսությունների ու խորհանուենությունների աշխատանքում ուղյություն ունեցող հոկայական թերությունների, չնայած վոր նրանց զերակշռող մասն աճեց միմիայն վերջին յերեք տարում, չնայած վոր մենք դեռ չատ վատ ենք տիրապետել գյուղատնտեսական արտադրության նոր տեխնիկային, վոր այդ գործում մենք համարյա փորձառություն չենք ունեցել : Կրկնում եմ, կոլտնտեսություններում միայած և խորհանուենություններում աշխատող մարդկանց աշխատանքի շահավետությունը՝ համեմատած անհատական գյուղացու աշխատանքի հետ՝ արգեն դործանատկանապես հաստատված ե և հաստատվում ե միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր մարդկանց աշխատանքի որինակով : Առա թե ինչո՞ւ ներկա պայմաններում թերքատվության բարձրացման դործը հոկայական չափով հեշտացել է՝ չնորմիվ այն տիրապետող դիրքի, վոր ունեն կոլտնտեսություններն ու խորհանուենությունները գյուղատնտեսության մեջ : Ամբողջ դործը կախված է լինելու աշխատանքը կազմակերպելու կարողությունից՝ մանավանդ ցանքի և բերքահամարքի ժամանակ, կախված է լինելու այն բանից, թե ինչ չափով կարող ենք մենք հակահարված տալ խորհրդային իշխանության ու՝ կոլտնտեսական շինարարության թշնամիներին, վո-

բոնք թափանցել են կոլտնտեսություններն ու խորհանուենությունները, կախված է լինելու այն բանից, թե ինչ չափով կարող ենք մենք համարմբել այդ խնդրի շուրջն իրոք առաջավոր և կոլտնտեսական մասսային՝ պայքար մղելու աշխատանքի կարգապահության համար և կոլտնտեսական գործիքների շնկերներին, կոլտնտեսականների ամբողջ հիմնական մասսային՝ պայքար մղելու աշխատանքի կարգապահության համար գործադրությունը պարագաների վերաբերմունք ցույց տալու համար, ընդդեմ ծուլերի, ընդդեմ վատանիչների ու գողերի և նախ և առաջ ընդդեմ նրանց թիկունքում թագնված կուլակային ու հակածնղափոխական այլ տարբերի :

Ինչո՞վ են հաղթանակ տանում կոլտնտեսություններն ու խորհանուենությունները անհատական գյուղացիական անտեսության վրա : Նրանով, վոր միացած իրենց աշխատանքում, նրանք հենցում են գյուղատնտեսական առաջավոր տեխնիկայի վրա, ոգտագործելով լավագույն գյուղատնտեսական մեքենաները և տրակտորները :

Վերցնենք վաստերը : Առաջին հնգամյակի սկզբին մեր դյուռ զատանեսության մեջ գործադրուն ունեցող մեքենաների ու գործիքների ամբողջ արժեքը կազմում էր 1.150 միլիոն ռուբլի : Առաջին հնգամյակի չորս տարվա ընթացքում գյուղատնտեսությանը արվել էն 1.600 միլիոն ռուբլու արժեք ունեցող մեքենաներ ու գործիքներ : Այդպիսով մի հնգամյակի ընթացքում, չորս տարվա ընթացքամյակի ընդամյակի ընթացքում, գյուղատնտեսությունն ստացել է ավելի չատ գործիքներ ու մեքենաներ, քան ունեցել է հնգամյակի սկզբին : Դրան ավելացրած նաև այն վոր գյուղատնտեսական նոր մեքենաներն զգալիորեն ավելի արտադրողական են, քան հները : Առաջին հնգամյակի ընթացքում արտադրակես փոխվեցին գյուղատնտեսական արտադրության տեխնիկայի հիմքերը մեր յերկրում : Հենց այդ և մեր ուժը :

Նույնիսկ նախքան հնգամյակի սկզբին արորը բավականաչափ նկատելի դեր էր խաղում գյուղատնտեսության մեջ : Այդ ժամանակից ի վեր այստեղ մեծ փոփոխություններ կատարվեցին : Հնգամյակի վերջում արգեն սկսեց խոշորագույն դեր խաղալ տրակտորի հերկը :

Առաջին հնգամյակի սկզբին ձեռքի ցանքը տիրապետող դիրք եր գրավում : Հնգամյակի տարիներին գործն արմատապես փոխ-

զեց: Յանքի հիմնական ու վճռական գործիքը դարձավ շարքայան մեջնան, ընդվորում արդեն հսկայական դեր և խաղում տրակտուրային շարքացանը:

Մանգաղն ու գերանդին շատ շրջաններում դեռ 1928 թվականին հիմնական գործիքներ ենին հայարույսերի բերքահավաքի համար: Այստեղ ևս արմատապես փոխվեց գործը: Առաջին հնդամյակի վերջերին հայարիւյսերի բերքահավաքի հիմնական գործիքները դարձան ձիաքարչ բերքահավաքի մեթենաները և կոմքայնը տրակտորի հետ միախին:

Նդրայալ և ձեռքի այլ գործիքներով կալովում եր տասնյակ միլիոնավոր հեկտար ցանքերի բերքը դեռ առաջին հնդամյակին ամենիշականորեն նախորդող շրջանում: Այդ ժամանակից ի վեր այսուղ ևս բախիս բուն իմաստով փոխվել ե պատկերը: Ներկայումս հայարույսեր կալսելու հիմնական գործիքներն են ձիաքարչ և մեխանիկական կալսիչ մեթենան ու կոմքայնը: Ապա, հայտնի յե, վոր կոմքայնը զյուղատնտեսության ասպարիզում միաժամանակ մի շարք կարևորագույն աշխատանքներ և կատարում, այն ե՝ հնձում և, կալսում և տեսակալվորում:

